

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եթէ մեղքերուդ համար թողութիւն կ'ուզես, հրաւիրէ որբերը, այրիները, վշտահարները, տառապածները, դժբախտները, անդամալոյծները, կոյրերը, կաղերը, կարիքաւորները, բանտարկեալները, բոլոր անօթիները եւ անմխիթարները: Մխիթարէ՛, սփոփէ՛ եւ կերակրէ՛ զանոնք: Միայն անոնց ծառայէ՛, անոնց շուրջ դարձի՛ր, ուրախացո՛ւր եւ պատուէ՛ զանոնք քաղցր խօսքերով, որպէսզի մեղքերուդ թողութիւն եւ տանդ փրկութիւն ստանաս: Այսպէս կազմակերպէ՛ քու ընդունելութեանդ հրաւերները եւ աղօթատեղիները ու թշուառներուն հրաւերին մէջ հարուստները եւ բարձր դասակարգը նկատի մի՛ ունենար, որպէսզի անոնք, (աղօթատեղիները) նախագահեն ու անոնք ըլլան առաջինները: Անոնք թող նստին սեղանին վերը եւ վարը. միայն զանոնք ներս հրաւիրէ աղաչանքով եւ նամբո՛ւ դիր աղերսանքով: Եթէ այսպէս հիւրընկալես, ոչ թէ տուած՝ այլ առած կ'ըլլաս, ոչ թէ ծախած՝ այլ մեծ շահ մը ապահոված ու նաեւ թողութիւն ստացած կ'ըլլաս: Ասոր համար էր, որ Քրիստոս կ'ըսէր. «Երբ հրաւեր կու տաս, հարուստները մի՛ կանչեր», որպէսզի անոնց տրուած ուշադրութեան պատճառաւ աղօթատեղիները արհամարհուած չգգան եւ դուն, քու կողմնակալութեանդ պատճառաւ չդատապարտուիս որպէս օրինազանց մը, մման անոր որ կ'ըսէ. «Ան որ գեղեցիկ հագուստներ հագած է, պէտք է անոր ըսէք. պատիւ ըրէ՛, այստեղ նստէ՛» իսկ աղօթատեղիները պիտի ըսէք. «Գնա՛ եւ սանդխամատին ծայրը նստէ՛» ու այդպէս ընելով չար մտածումներու դատաւոր պիտի դառնաս, որովհետեւ հարուստները ընդունելով մեղք կը գործէք եւ դուք իբրեւ օրինազանցներ կը մեղադրուիք օրէնքով:

Յովհան Մանդակունի շառն

ԱԻՎՁԱՆ-ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Ամէն եկեղեցի իր Մկրտութեան Ա. Աւագանը կ'ունենայ: Նկատի ունենալով, որ Մկրտութեան Խորհուրդը նախապայման է քրիստոնէացման, հնագոյն ժամանակներէն իսկ եկեղեցիները ունեցած են իրենց Մկրտարանները, եկեղեցւոյ յարկէն ներս՝ Աջակողման աւանդատան մէջ:

Անցեալին Մկրտութեան Ա. Աւագանները աւելի մեծ եղած են եւ իրենց խորութեամբ հնարաւորութիւնը տուած են չափահաս մկրտուողներ իրենց մէջ ընդունելու եւ զանոնք շուրջով մինչեւ մէջքը ծածկելու: Ներկայիս նկատի ունենալով, որ բոլոր մկրտուողները իրենց մանուկ տարիքին կը մկրտուին, պատշաճելով ներկայ պայմաններուն, արդի Մկրտարանները տաշտանման շինուածքներ են, որոնք եկեղեցւոյ Աջակողմեան աւանդատան մէջ հաստատուած կ'ըլլան. իսկ եթէ աւանդատունը փոքր է եւ կարելիութիւնը չունի Մկրտութեան Ա. Աւագանը իր մէջ ընդունելու, հարկաւորիչ պարագային հնարաւոր է աջակողմեան պատի առջեւ տեղադրել զայն: Ներկայ աւագանները իրենց ծաւալով եւ խորութեամբ պէտք է հնարաւորութիւն տան քահանայ հայրերուն՝ երեք տարեկան եւ վար մանուկները ընկղմամբ մկրտելու:

Նոր Մկրտարանը Ա. Միւռոնով կ'օծուի եպիսկոպոսի ձեռամբ:

Ընդհանրապէս Մկրտութեան Ա. Աւագանին նախապէս արձանագրուած է Հաւատք, Յոյս, Սէր եւ Մկրտութիւն:

ՀԱՍՅԷ.



ԺԳ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 25 ԱՊՐԷԼ 2021** ԹԻԻ 16

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Գրծ. 13.16-43: Ա. Պտ. 5.1-14
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 5.19-30

(ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ)

Յիսուս անոնց ըսաւ. «Հաստատ գիտցէ՛ք, թէ մարդու Որդին ինքն իրմէ ոչինչ կը կատարէ, այլ՝ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ: Որովհետեւ ինչ որ Հայրը կը գործէ, Որդին ալ նոյնը կը գործէ: Հայրը կը սիրէ Որդին եւ անոր ցոյց կու տայ ինչ որ ինք կը կատարէ: Տակաւին ձեր տեսածներէն աւելի սքանչելի գործեր ալ ցոյց պիտի տայ Որդին, այնպէս որ դուք պիտի զարմանաք: Ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ անոնց, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ անոնց՝ որոնց ինք կ'ուզէ: Եւ Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ՝ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է իր Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն: Ան որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը, որ զայն դրկած է:

Հաստատ գիտցէ՛ք, ան որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր, որ զիս դրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է: Վստահ եղէ՛ք, ժամանակ կու գայ - եւ արդէն իսկ եկած է - երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն եւ լսողները պիտի ապրին: Որովհետեւ, ինչպէս որ Հայրը կեանք պարգեւելու զօրութիւնը ունի իր մէջ, այդ զօրութիւնը տուած է նաեւ Որդիին: Նոյնպէս ալ դատելու իշխանութիւնը տուաւ Որդիին, որովհետեւ անիկա մարդու Որդին է: Ուրեմն մի՛ զարմանաք որ ըսի, թէ ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք, որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան: Անոնք, որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին: Ես ինձմէ չէ, որ կը դատեմ, այլ՝ կը դատեմ այնպէս ինչպէս Հօրմէս կը լսեմ եւ ուրեմն իմ դատաստանս արդար է, որովհետեւ կը գործադրեմ ո՛չ թէ կամքս, այլ՝ կամքը անոր՝ որ զիս դրկեց»:

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

Զատիկի երրորդ Կիրակին կը կոչուի Կարմիր Կիրակի: Կարմիր կոչումը բացատրող եկեղեցական որեւէ արարողութիւն գոյութիւն չունի: Կարմիր կոչումը կը մնայ անբացատրելի, սակայն հաւանաբար դարձեալ բնութեան հետ կապ ունի: Կանաչ եւ Կարմիր Կիրակիներու սովորութիւնն էր եկեղեցւոյ մէջ կանաչ եւ կարմիր գոյներու գործածութիւնը: Եկեղեցւոյ վարագոյրը, պատարագիչի զգեստը, դպիրներու շապիկները՝ Կիրակի օրուան համար կանաչ կամ կարմիր կ'ըլլային: Ժամանակին սովորութիւն էր նաեւ գաւառներուն եւ գիւղերուն մէջ կանաչ կամ կարմիր հագուելը:

Ումանք Կարմիր Կիրակին նուիրած կը համարեն Յիսուսի եօթներորդ անգամ աշակերտներու երեսնալուն՝ Տիրեբական ծովի ափին, Պետրոսի ուրացումին եւ Բաւոթիւն ստանալուն, համաձայն Յիսուսի երեք հարցումներուն. «Սիմոն Յովհաննու, կը սիրե՞ս զիս»: Կարմիր Կիրակիին մէջ այլաբանական բացատրութիւն, նմանութիւն գտնելն ու որոշելը դիւրին է անշուշտ: Քրիստոսի արիւնով ծաղկած Կիրակի, Քրիստոսի արիւնով հաստատուած եկեղեցի: Բայց այս ձեւով, կանաչ ու կարմիր կոչումի քրիստոնէական այլաբանական բացատրութիւնը միայն կրնանք ունենալ, առանց հասկնալու իսկական իմաստը, ազգային աւանդութիւնը:

Հեւեաբար, Կարմիր Կիրակի օրը Կանաչ Կիրակի օրուան ժողովրդական սովորութիւն կը տիրէ, երթալ բացօթեայ վայրեր, նոր ծաղկած բնութեան ծոցը ըլլալ:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչ ՀԱՆԴԻՍԱԿՈՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԿԱՐԴԱՑՈՒԻ ԱԻՆՏԱՐԱՆԸ

Աւետարանի ընթերցումը միւս բոլոր ընթերցումներէն շատ աւելի մեծ բացառութիւն ունի: Զայն կը կարդան առանձին հանդիսաւորութեամբ: Սարկաւազը կը ձայնէ Օրթի (Ուղի). քահանան՝ Խաղաղութիւն ամէնեցուն (Խաղաղութիւն ամէնեցուն). դպիրները՝ եւ ընդ հոգւոյդ քում (Նաեւ քո՛ւ հոգիիդ). սարկաւազը՝ երկիւղածութեամբ լուարուք (Երկիւղածութեամբ մտիկ ըրէ՛ք). Աւետարանը կարդացողը՝ Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի (Յիսուս Քրիստոսի Աւետարանը՝ Մատթէոսի համաձայն). դպիրները՝ Փառք քեզ Տէր Աստուած մեր (Փա՛ռք քեզի, Տէր Աստուած մեր). սարկաւազը՝ Պռոսխումէ (Մտիկ ընէ՛նք). ժողովուրդը՝ ասէ Աստուած (Աստուած է, որ կը խօսի):

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ԱՐՏԱՔԻՆՈՎ ԳԵՆՔ ԿՐՆԱՐ ԽԱՐԵԼ ԶԱՏՈՒՄ

Նախորդ բաժինին մէջ ըսինք, որ երբ թագաւորը նոր թագուհի մը պիտի ընտրէր, թագուհին պէտք էր 12 ամիս շարունակ ինքզինք մաքրէր գնուսի իւղով, անուշահոտ խունկերով եւ այլ բաներով եւ անկէ ետք միայն բերուէր թագաւորին ներկայութեան: Այս գործողութեան առընթեր, յիշենք նաեւ, որ ուրիշ սովորութիւն մը եւս կար: Կոյսը թագաւորին ներկայացուելէ առաջ, յատուկ սենեակ մը կը տարուէր, որ ոսկեղէն եւ արծաթեղէն զարդարանքներով լեցուն կ'ըլլար, անոնցմով ինքզինք առաւել եւս հրապուրիչ եւ գեղեցիկ դարձնելու համար: Երբ Եսթեր Ասուերոս թագաւորին պիտի տարուէր, չուզէր իր վրայ ոսկեղէն կամ արծաթեղէն ունէ զարդ առնել: Թագաւորը ամենէն շատ զայն սիրեց եւ թագուհի ընտրեց (հմմտ. Եսթ 2.15-17):

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Եթէ կ'ուզենք հաճելի ըլլալ Աստուծոյ եւ տեղ ունենալ անոր արքայութեան մէջ, պէտք է մենք մեզ պահենք կարելի եղածին չափ պարզ, հեռու ամէն տեսակ խաբուսիկ հաւատալիքներէ եւ համոզումներէ:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԱՏԱՌԾՈՅ ՄՕՏԵՆԱԿ Կ՛ՈՒՉԵՍ Կարդա՛ր ՍԱԿՄՈՍ 16

Պահպանէ՛ զիս, ո՛վ Աստուած, քեզի ապաւինած եմ: ՏԻՌՈՋ ըսի. «Դո՛ւն ես Տէրս, քեզմէ՛ գատ ուրախութիւն չունի՛մ»:

Ի՛նչ փառահեղ եմ երկրի վրայ սուրբերը, ամբողջ փափաքս է՛ անոնց հետ ըլլալ: Բազմաթիւ ցաւերով պիտի հարուածուին անոնք՝ որոնք ուրիշ աստուածներու ստեղծեց կը վագեն, բայց ես գոհեցու արիւն պիտի չընծայե՛մ անոնց, անոնց անունն իսկ բերանս պիտի չառնեմ:

Տէ՛ր, դո՛ւն ես իմ ժառանգութիւնս, ինձի վիճակուած բաժինը, եւ իմ բաժինս դուն պիտի տաս ինձի:

Ինձի ելած վիճակը ի՛նչ հաճելի է ինձի, իրաւամբ շնորհք մը՝ որ զիս խնդութեամբ կը լեցնէ:

Կ'օրհնաբանեմ Տէ՛ր, որ իր խորհուրդով կ'առաջնորդէ զիս, նոյնիսկ գիշերը զիս կը խրատէ խղիմտանքիս միջոցաւ: Միշտ Տէ՛ր իմ դիմացս ներկայ ունիմ. երբ անիկա իմ կողմիս է՝ ոչինչ կրնայ զիս սասանեցնել: Ահա թէ ինչու սիրտս ուրախ է, հոգիս ցնծութեան մէջ է, եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի, որովհետեւ գիտեմ թէ զիս մեղքներու աշխարհին մէջ պիտի չզգես եւ պիտի չի թողուս, որ բու հաւատարիմ ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ:

Կեանքի նամբան ցոյց կուտաս ինձի. ներկայութիւնդ զիս ցնծութեամբ կը լեցնէ, եւ բու մօտդ ըլլալը յաւետեղանկութիւն է: